

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արարատի համայնքապետարանը 2022թ նոյեմբերի 17-ին ժամը 11:00-ին հայտարարում է Արարատ համայնքի վարչական տարածքում գտնվող հասարակական կառուցապատման հողատարածքների աճուրդ վաճառք: Աճուրդի է դրվում.

1. Լոտ ծածկագիր 03-002-0010-0091, Արարատ քաղաքի Ա.Իսահակյան 32/6 հասցեում գտնվող 0.00249 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամաս:
2. Լոտ ծածկագիր 03-013-0056-0101, Ավշար գյուղի Ջորավար Անդրանիկի 2/3 հասցեում գտնվող 0.00646 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամաս:

Նախավճարը սահմանված է՝ մեկնարկային գնի 50%-ը, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, աճուրդային քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Աճուրդի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան, ք. Արարատ, Շահումյան փ. 34: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Արարատի մարզ, Արարատ համայնք /հեռ. 060 88 55 55/

